ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Սառա Նալբանդյան

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր

2. Գործուղման վայրը և ժամկետները

ԱՄՆ, ք. Վաշինգտոն, 03.10.2026 – 24.10.2026 թթ.

3. Հրավիրող կողմը

Հրավիրող կողմը Հայաստանում ԱՄՆ դեսպանատունն է: Այցի շրջանակում նախատեսվում է մասնակցություն Միջազգային այցելուների առաջնորդության ծրագրին (International Visitor Leadership Program - IVLP)՝ «Ռազմավարական համալսարանական գործընկերություններ» խորագրով:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր զարգացնել Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի միջազգային համագործակցությունը, հաստատել նոր մասնագիտական կապեր ԱՄՆ-ի կրթական և մշակութային կառույցների հետ, փոխանակվել առաջավոր փորձով և ձևավորել հիմք հետագա համատեղ կրթական, մշակութային ու գիտական ծրագրերի իրականացման համար:

5. Քննարկված թեմաները

ԱՄՆ-ի բարձրագույն կրթության համակարգը, ամերիկյան բուհերի միջազգայնացման ուղիները, «Ֆուլբրայթ» կրթաթոշակային ծրագրերը (Fulbright Program), ԱՄՆ բուհերում որակի ապահովման գործընթացները, ինչպես նաև

Տեխասի, Մասաչուսեթսի և Վաշինգտոնի նահանգների բուհերի հետ համագործակցության հնարավորությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումների և քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել ԱՄՆ-ի բարձրագույն կրթության համակարգին և միջազգային համագործակցության հնարավորություններին: Քննարկվել են ԱՄՆ-ի երեք բուհերի հետ ԵԹԿՊԻ-ի համագործակցության սկզբնավորման, փորձի փոխանակման և համատեղ կրթական ու մշակութային ծրագրերի իրականացման հեռանկարները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հյուսիսային Տեխասի համալսարանի, Սիեթլի համալսարանի և Վաշինգտոնի մյուս համալսարանների հետ համագործակցության զարգացման և հետագա գործընկերության ամրապնդման նպատակով նախաձեռնվել է համագործակցության հուշագրերի ստորագրման գործընթացը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

ԱՄՆ-ի բուհերի հետ համագործակցության զարգացումը հնարավորություն կտա ԵԹԿՊԻ-ին ընդլայնել միջազգային կապերը, փոխանակել մասնագիտական փորձը և իրականացնել համատեղ կրթական ու մշակութային ծրագրեր:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

28/10/2026